ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» 08 2021 թ.
№ 22/01-08880

ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. վարչական շենք
հեռ. /011/51-82-82, davtashen@yerevan. am

«Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ
տնօրեն Վլադիմիր Հայրապետյանին

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և Ձեր ընկերության միջև 16.07.2021 թվականին կնքվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիրը:

Սույն գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Ձեր 2021 թվականի հուլիսի 30-ի գրությամբ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊ ընկերության անունից տեղեկացրել եք,որ ընկերությունը չնախատեսված խոչընդոտների պատճառով հրաժարվում է մատակարարել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքները և խնդրել եք լուծարել պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հիմք ընդունելով Ձեր դիմումը վերոնշյալ պայմանագիրը լուծարելու վերաբերյալ և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքով, Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 16.07.2021 թվականին, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/158-1» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է լուծված:

Ծանուցումը ներկայացվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջներն իրականացնելու համար:

Հարգանքով՝

Մ.ԹՈՒՄԱՍՅԱՆ

Իրավաբանական բաժին
Կատ.Մ.Խաչիկյան, հեռ.011518283